Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ***Անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը***

   Արևիկ Անափիոսյան

2. ***Զբաղեցրած պաշտոն(ներ)ը***

   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

   Լոնդոն, Միացյալ Թագավորություն

   Հունվարի 21-24

4. ***Հրավիրող կողմը***

   Բրիտանական խորհուրդ, ՄԹ կառավարություն (կրթության համաշխարհային ֆորում)

5. ***Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).***

   Մասնակցություն Կրթության համաշխարհային ֆորումին և հանդիպումներ ՄԹ թագավորության համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների, ինչպես նաև կրթության ոլորտում առաջատար փորձագետների, այդ թվում BETT ցուցահանդեսում ներկայացված կրթական տեխնոլոգիաների մշակման և զարգացման առաջատար ընկերությունների ներկայացուցիչների հետ:

   Հանդիպում Անգլիայի և Ուելսի Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալության, BBC World Questions հաղորդման ներկայացուցիչների, ինչպես նաև Եվրոպական պետությունների կրթության նախարարների և նախարարի տեղակալների հետ: Միևնույն ժամանակ հանդիպում Microsoft Education-ի փոխնախագահ Անտոնի Սալսիտոյի հետ:

6. Քննարկված թեմաները.

Ֆորումի ընթացքում քննարկվել են կրթության ապագայի և զարգացման հեռանկարների վերաբերյալ հարցեր, ներկայացվել է կրթական նորարարության Հայաստանի մոտեցումները: Տեղի են ունեցել հանդիպումներ ՄԹ կրթական սեկտորի առաջատար կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդիպումներին նպատակն է եղել նոր գործընկերություններ ու համագործակցության հնարավորություններ հաստատելը: Հանդիպումների ընթացքում, մասնավորապես, քննարկվել է հանրակրթության ոլորտում զուգահեռ համակարգեր ունենալու պարագայում հնարավոր խնդիրները, որակավորումների ոլորտային շրջանակ ունենալու նպատակահարմարության և գործնական կիրառելիության հարցը, BBC World questions-ի նկարահանման թեմաները, ուսուցիչների վերապատրաստման համակարգի բարեփոխման նախագծերը, հանրակրթության էլեկտրոնային կառավարման համակարգը և վերջինիս զարգացման հեռանկարները, ինչպես նաև Microsof office 365-ը հանրակրթական դպրոցներում ներդնելու հեռանկարն ու նպատակահարմարությունը;

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նախկին կրթության քարտուղար (նախարար), Ներքին գործերի քարտուղար (նախարար) պարոն Չարլզ Քլարքի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են Անգլիայի հանրակրթական համակարգը և ակադեմիական դպրոցների (grammer schools) թեր և դեմ կողմերը, համակարգի զարգացման վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև հայաստանյան համատեքստում զուգահեռ կրթական համակարգերի հնարավոր ազդեցությունը կրթության համակարգի բարեփոխումների ոլորտում: Բրիտանական խորհրդի կրթության փորձագետների հետ քննարկվել է նաև ՄԿՈ և Բարձրագույն կրթության ոլորտի արդի հիմնախնդիրները և զարգացման հնարավորությունները:

Որակի ապահովման գործակալության հետ քննարկման ժամանակ ներկայացվել են ՀՀ որակի ապահովման ոլորտում պետության առջև ծառացած խնդիրները և քննարկվել են ոլորտային որակավորումների շրջանակ մշակելու նպատակահարմարության կամ, որպես

այլընտրանք կամ լրացում, առարկայական չափանիշների մշակման նպատակահարմարության հարցը:

BBC World questions հաղորդման ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ներկայացվեց հաղորդման ձևաչափը, ինչպես նաև Հայաստանում ընթացող բարեփոխումների տրամաբանությունը ծրագրի շրջանակներում հնչեցվելիք հարցերի հասցեականությունն ապահովելու նպատակով:

Ֆորումի ժամանակ նորարարության մասին պանելում, որպես խոսնակ հրավիրված լինելով, Ա. Անափիոսյանը ներկայացրեց նորարարության եզրույթի հայկական կոնցեպտուալիզացիան և հաջողված փորձը, այդ թվում ԹՈՒՄՈ-ն և EU4Innovation ծրագրի շրջանակներում նորարարական մոտեցումների ներառումը, ԱրՄաթ լաբորատորիաների հիմնումը հանրակրթական դպրոցներում, ինչպես նաև ներառական կրթության բարեփոխման ոլորտի հաջողություններն ու քաղած դասերը և մշակութային նորարարության հայաստանյան փորձը (ArtAlive – Շնչող Արվեստ):

Բրիտանական խորհրդում բացառապես հայկական պատվիրակության համար կազմակերպած հանդիպումների շրջանակում քննարկվել է ուսուցիչների վերապատրաստման համակարգի բարեփոխման տեսլականը և բրիտանական մոդելի ներդրման հնարավորությունները:

MicroBit ընկերության հետ քննարկվել է հանրակրթության ոլորտում կազմակերպության արտադրանքի օգտագործման հեռանկարը վաղ դասարաններում կոդավորում դասավանդելու տեսանկյունից: Whizz educaton կազմակերպության տնօրենի հետ քննարկվել է իրենց կողմից մշակված և մշակման փուլում գտնվող էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման հեռանկարը ՀՀ հանրակրթության ոլորտում:

IRIS connect կազմակերպության հետ քննարկվել է Հայաստանում փորձարկվող ուսուցիչների վերապատրաստման առցանց պլատֆորմի կողմից տրամադրվող հնարավորությունները և մասշտաբի մեծացման հեռանկարը:

Առանձին հանդիպում է տեղի ունեցել Microsoft Education-ի փոխտնօրեն Անթոնի Սալսիտոյի և իրենց թիմի հետ: Հանդիպման նպատակն էր հասկանալ Office 365 -ի ներդրման փոխադարձ հետաքրքրվածությունը, սակայն հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև հանրակրթական դպրոցների տնօրենների վերապատրաստման

համակարգ-շրջանակի տեղայնացման հնարավորությունները, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտում ՏՏ կրթության և հետազոտությունների շրջանակում համագործակցության հեռանկարները:

8. Սպորագրությունը, ամսաթիվը

30.01.2019

X _____